



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 10

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2016 Թ. ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների քննարկում:
2. Առկա ասպիրանտների ատեստացիա:
3. Տեղեկատվություն մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպվող գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:
4. Հայ գրականության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
5. 2015-2016 ուստարվա սոցիալաբանության արդյունքների քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 24-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 10-րդ նիստի օրակարգը:

1-ին հարցի առիթով լսվեցին պետական քննական հանձնաժողովների նախագահների՝ Բ. Գ. Ղ. Գայանե Գևորգյանի, մ. Գ. Ղ., պրոֆ. Հայկ Պետրոսյանի և Բ. Գ. Թ.. ղոց. Լիլիթ Մելիքյանի հաշվետվությունները (ղրանք կից ներկայացվում են):

Մասնավորապես նկատվեց, որ թե՛ «Հայոց լեզու և գրականություն», թե՛ «Գրականության տեսություն» և թե՛ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությունների ավարտական քննությունների, բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններն անցել են բնականոն ընթացքով, և արդյունքները բավական գոհացուցիչ են: Հարցի քննարկման առիթով արտահայտվեցին նաև պրոֆ. Ա. Ավագյանը և ամբիոնների վարիչներ պրոֆ. պրոֆ. Ս. Մուրադյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Ն. Հարությունյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Ս. Գրիգորյանը և Վ. Պետրոսյանը: Նրանք մասնավորապես նշեցին, որ պետական քննություններն ու ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները ցույց տվեցին, որ ուսանողներն ընդհանուր առմամբ աչքի ընկան նյութի բազմակողմանի ու խոր իմացությամբ: Նրանց խոսքը տրամաբանված էր, դատողությունները՝ համոզիչ: Միայն սակավաթիվ շրջանավարտների մոտ էին նկատելի մտքերը հստակ ձևակերպելու որոշակի դժվարություններ:

Օրակարգի **2-րդ** հարցի առիթով ելույթ ունեցան պրոֆ. Ա. Ավագյանը, առկա ասպիրանտներ ունեցող համապատասխան ամբիոնների վարիչներն ու գիտխորհրդի նիստին հրավիրված ասպիրանտները: Հաշվի առնելով հաշվետու շրջանում վերջիններիս կատարած բավարար կամ լավ աշխատանքները՝ որոշվեց ատեստավորել հետևյալ ասպիրանտներին՝

1. Սաթենիկ Հարությունի Կարապետյանին (ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրակ. պատմ. ամբիոն).
2. Սոսե Փարթուղի Բողոսյանին (ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրակ. պատմ. ամբիոն).
3. Գրիգոր Շաշիկյանին (գրակ. տեսության և գրաքննադատության ամբիոն).
4. Դիանա Մնացականյանին (գրակ. տեսության և գրաքննադատության ամբիոն).
5. Թամարա Պողոսյանին (հայոց լեզվի պատմ. ամբիոն):

Օրակարգի **3-րդ հարցի**՝ մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպվող միջազգային գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների առիթով լայն տեղեկատվությամբ հանդես եկավ ամբիոնի վարիչ պրոֆ. Ն. Հարությունյանը: Նա հանգա-

մանորեն ներկայացրեց աշնանը կազմակերպվելիք գիտական նստաշրջանի ծրագիրն ու շրջանակները, աշխարհագրական ընդգրկումը, նախատեսվելիք ժամանակացույցը և հարակից այլ խնդիրները: Գիտական խորհուրդն իր խրախույսը հայտնեց ամբիոնին ու նրա եռանդուն վարիչին՝ խոստանալով հնարավորինս աջակցել ու մասնակցել այդ կարևոր միջոցառմանը:

Օրակարգի **4-րդ հարցը** նվիրված էր ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի տարեկան հաշվետվությանը (այն կից ներկայացվում է): Ամբիոնի վարիչ պրոֆ. Ս. Մուրադյանը մասնավորապես նշեց, որ ամբիոնը շարունակել է իր գործունեությունը թե՛ հայ հին և միջնադարյան, թե՛ նոր գրականության ուղղություններով: Ամբիոնի աշխատակիցներն ընդհանուր առմամբ հաշվետու տարում հրատարակել են 4 մենագրություն, 25 հոդված, կարդացել 10 զեկուցում:

Գիտական խորհուրդը ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի կատարած տարեկան աշխատանքները միաձայն գնահատեց բավարար:

2015-2016 ուստարվա սոցհարցումների արդյունքների քննարկում:

Օրակարգի **5-րդ՝** սոցհարցումների արդյունքների առիթով ելույթ ունեցավ պրոֆ. Ավագյանը: Նա ընթերցեց ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի սոցհարցումների արդյունքները և խորհրդի անդամների ուշադրությունը այս էլ որերորդ անգամ հրավիրեց 4 միավորից ցածր գնահատական ստացած դասախոսների վրա՝ հատուկ շեշտելով, որ զարմանալի մի օրինաչափությամբ այդ գնահատականներին են արժանանում միևնույն դասախոսները: Դեկանը համապատասխան ամբիոնի վարիչներին վերստին հանձնարարեց պարզել նիշերի ցածր լինելու պատճառներն ու համապատասխան հետևություններ անել:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ ԵՊՀ-ի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոց., ք. գ. թ. Ռուբիկ Կառլենի Էլոյանի «Երվանդ Օտյան. արցունքոտ ծիծաղի մեծ վարպետը» խորագրով մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը և Վ. Սաֆարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ-ի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոց., բ. գ. թ. Ռուբիկ Կառլենի Էլոյանի «Երվանդ Օտյան. արցունքոտ ծիծաղի մեծ վարպետը» խորագրով մենագրությունը երաշխավորել տպագրության:

բ/ ԵՊՀ-ի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոց., բ. գ. թ. Վարդան Վոլոդյայի Եղիազարյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ դոցենտ Վ. Եղիազարյանն արդեն երկար տարիներ զբաղվում է հայ հին և միջնադարյան գրականության տարաբնույթ հարցերով, մասնավորապես ողբերգության ժանրով: Վերջինս, որ ակունքներով հասնում է մինչև հին հունական գրականություն ու Աստվածաշունչ, հայ իրականության մեջ սկզբնավորվել է 5-րդ դարից և իր տարբեր դրսևորումներն է ունեցել միջնադարյան հայ գրականության մեջ՝ իբրև պատմական ողբերգական իրադարձությունների գեղարվեստական արտացոլում ու ժողովրդական բանահյուսական կամ հեղինակների քնարական տրամադրությունների արտահայտություն: Առաջադրվող թեման արդիական է և իրենից ներկայացնում է գիտական լուրջ հետաքրքրություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ-ի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոց., բ. գ. թ. Վարդան Վոլոդյայի Եղիազարյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Ողբերգության ակունքները և դրսևորման բազմազանությունը միջնադարյան հայ գրականության մեջ»:

գ/ ԵՊՀ-ի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոց., բ. գ. թ. Հայկ Աշոտի Համբարձումյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Մաֆարյանը, Վ. Գաբրիելյանը և Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ դոցենտ Հայկ Համբարձումյանը երկար տարիներ զբաղվում է հայ հին և միջնադարյան գրականության տարաբնույթ հարցերով, մասնավորապես վիպական մոտիվներով ու «Մասնա ծոեր» էպոսով: Նրա դոկտորական ատենախոսության նպատակն է հայ միջնադարյան մատենագրության և հարակից այլ տեքստերի ու «Մասնա ծոեր» էպոսի գրառված բոլոր տարբերակների զուգադիր քննությամբ բացահայտել և ներկայացնել գրավոր-գրքային ու բանավոր ավանդույթների միջև առկա բազմաթիվ ընդհանրությունները՝ տարաբնույթ փոխազդեցությունների և մշակութային ընդհանուր ավանդույթի մեջ գոյության համատեքստում:

Առաջադրվող թեման արդիական է և իրենից ներկայացնում է գիտական լուրջ հետաքրքրություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ-ի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոց., բ. գ. թ. Հայկ Աշոտի Համբարձումյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Վիպական մոտիվները հայ միջնադարյան գրականության մեջ և «Մասնա ծոեր» էպոսում»:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ